


Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ք Օ Ն № 253.



Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առաւօրեայ օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լիցիտով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իրաւաւորութիւնը բառին 2 կոպեկով.
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներկայացումները առիթով.—ՆԵՐՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Վրաց գրականութիւնից. Նամակ
կարգից. Նամակ Գրաստութեանը. Ներքին
լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ
ժողովրդից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒ-
ՐԵՐ. Մանրանկար.—ՀԵՆՈՒԹԻՒՆԵՐ.—ՅԱՅ-
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Մեր ընթերցողները գիտեն, որ Բագուի
հայ գերաստանական խումբը, սկսած ներ-
կայ մեծ պատի երկրորդ շարաթից, տալիս
է ներկայացումներ Թիֆլիսի արտիստական
ընկերութեան թատրոնական դահլիճում:
Տեղի են ունեցել արդէն չորս ներկայա-
ցումներ և պէտք է ենթադրել, որ նրանց
թիւը մինչև Չատիկ կը հասնիլ տասի:

Թիֆլիսում մեծ գոհութեամբ իմացան,
որ Բագուի հայ գերաստանական խումբը գի-
տաւորութիւն ունի մեզ մօտ ներկայացում
ներ տալու և հետաքրքրութեամբ գնացին
նրան տեսնելու և լսելու: Պէտք է ցաւել,
որ մեզ մօտ եկել է ոչ բոլոր խումբը ամ-
բողջապէս, այլ միայն նրա մի մասը, իսկ
միւսը բաժանվել է և ուղևորվել դէպի
Հիւսիսային Կովկաս: Եթէ մեր ընթերցող
այստեղ լինէր, այն ժամանակ մենք մեր
ձեռքին կունենայինք նիւթ պարզելու, թէ
արդեօք ի՞նչ առաջադիմութիւններ են ա-
րել մեր թատրոնական գործը և մեր գերա-
ստանական կազմը: Այն ժամանակ, մեր ստա-
յը տպաւորութիւնը կը վերաբերէր բո-
լոր գերաստաններին և մեր քննադատու-
թիւնը ու նրանից հանած եզրակացու-
թիւնները կը լինէին լիակատար:

Մենք միշտ ասել ենք, որ թատրոնական
գործի յարաւակութեան և պարզացման հա-
մար անհրաժեշտ է ունենալ հարուստ բե-
կերտութիւն, որը միևնույն ժամանակ թարմա-
նայ նոր-նոր պիեսներով: Հին բեկերտութեան
արդէն ձանձրացրել է մեր հասարակու-
թեանը և նա չէ կարող գտնել յաճախորդ-
ներ դէպի թատրոն: Բագուի գերաստանա-
կան խումբը այդ կողմից զարժնեց իր վրա
առանձին ուշադրութիւն, որովհետեւ նա
հանդէս եկաւ նոր պիեսներով: Եւ հասա-
րակութիւնը շատապէս թատրոն տեսնելու
այդ նոր պիեսները: Սակայն այդտեղ էլ
հանդէս եկաւ մի ուրիշ պակասութիւն:
Մինչև այժմ տուած չորս ներկայացումից
երեքը կրում են միակողմանի բնաւորու-
թիւն. նրանք վերցրած են կրօնական
աշխարհից և յիշեցնում են մասամբ հին
ողբերգութիւնները, որտեղ ճարտասանա-
կան ոճը, արհեստական վեհութիւնը, քա-
րողական մենախօսութիւնները բռնում են
գործողութիւնների մեծագոյն մասը:

Մեր գերաստանների հին սերունդը փչա-
ցրել է իր ճաշակը և իր խօսելու ձևը
«Շուշանիկի», «Սանդուխտի», «Արշակ Երկ-
րորդի» և դրանց նման ողբերգութիւննե-
րի վրա և շատ ժամանակ է հարկաւոր,
որ նա մոռանայ հինը: Նա նոյն իսկ ժա-
մանակակից կենսայից վերցրած պիեսնե-
րում խօսում է երգախառն և լալկան ա-
ռողջանութեամբ:

Սակայն փոխանակ մաքառելու այդ պա-
կասութեան դէմ, հանդէս են բերում նոր
ողբերգութիւններ, որտեղ զարձեռն ապա-
րել է բացվում մեղեդիական վարժու-
թիւնների համար: Գուցէ երբեմն հետաքր-
քական են և այնպիսի գրուածքներ, ինչ-
պէս են «Մեղեք», «Սաֆ», «Ժգէլը», բայց
նրանք պէտք է կազմեն ընդհանուր մի
չնչին մասը և յամենայն դէպս նրանք
պէտք է կրեն բացառութիւնների և թա-
րոնական նորութիւնների բնաւորութիւն:

Մենք շատ ցանկանում ենք, որ մեր
թատրոնական գործի այն սաղմը, որ խը-
նամբով պահվում է Բագուում, կարողանայ

բարգաւաճել իր ապագայ ճոխ զարգացման
համար, մենք շատ ցանկանում ենք, որ
Թիֆլիսի հայ հասարակութիւնը խորախու-
սէ և քաջալերէ Բագուից մեզ մօտ եկած
գերաստաններին, բայց պարտաւոր ենք
արձանագրել այն պակասութիւնները, որ
մենք նկատում ենք այդ կարևոր հասա-
րակական հիմնարկութեան գործողների
մէջ:

Հասարակութեան համար աւելի մատ-
չելի և դրաւիչ դարձնելու համար թա-
րօնը գերաստանները պէտք է նոյնպէս հոգ-
տանեն որքան կարելի է հժան նշանակել
թատրոնի տեղերի գները, որպէս զի յա-
ճախորդների այն մեծ մասը, որ անկարող
է իրան թող տալ մեծ ծախքեր թա-
րոնական գումարներով իրան համար, կա-
րողանայ գնալ թատրոն ոչ թէ մի երկու
անգամ, այլ յաճախէ բոլոր ներկայացում-
ները:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎՐԱՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

«Մօզգաւորի» (ճանապարհորդ), պատմական-հնագի-
տական և աշխարհագրական-ազգայնական տմայի-
րաբանական-հասարակական և քաղաքական գործըն-
թացողութիւնը 1. Պ. Ռոստոմա-
նովի և 2. Թիֆլիս:

Վերջին տարիներում նկատելի եղաւ, որ վը-
րացիների մէջ ընթերցանութիւնը շատ է տարած-
վում, որի ապացոյցն է այն հանգամանքը, որ
մեծ քանակութեամբ տպւում են վրացերէն
լեզուով նոր գրքեր, մանաւանդ ժողովրդական
գրքեր, և զգացվում է նոր վրացիների հրա-
տարակութեան պահանջ: Այս տարի վրաց լը-
րագրութիւնը հարստացաւ. «Կովկաս» շաբաթա-
թերթի դիւրը մեծացաւ և նիւթի կողմից
բազմապէս դարձաւ, իսկ ամենօրեայ «Ճիւղ-
Փութի» (ճանօթութեան թերթ) թերթը, որի
մէջ աւելի քան տարի է միայն յայտարա-
րութիւններ, հետադիւրներ և լուրեր էին տը-
վում: Գոհնայի խմբագրութեամբ, այս տա-
րի ծախքից, անցաւ վրաց հրատարակչական
ընկերութեան ձեռքը, յանձնվեց «Մօզգաւոր» ա-
սպի խմբագիր Ճոզեֆային: Կառավարութեան
թոյլտուութեամբ լրագրի դիւրը և ծրագիրը
մեծացաւ, դարձաւ հասարակական-քաղաքական
օրաթերթ, որ իր բովանդակութեամբ և առաջ-
նորդող յօդուածներով գերազանցում է ամե-
նօրեայ «Կովկաս» լրագրին:

Այս տարի վրաց ամսագիրների թիւն աւե-
լացաւ և «Մօզգաւորի» (ճանապարհորդ) ամ-
սագիրը, որ լոյս է տեսնում Ի. Պ. Ռոստոմա-
նովի խմբագրութեամբ և հրատարակութեամբ:
Այս պարտնը յայտնի է իբրեւ հրատարակիչ
վրացերէն ժողովրդական գրքերի և կազմող
«Ռուս-վրացերէն հանրագիտական բառարանի»:
«Մօզգաւորին» պատմական-հնագիտական և
աշխարհագրական-ազգայնական պատկերազարդ
ամսագիր է և նպատակ ունի տեղի ու տեղը
նկարագրել Վրաստանի նշանաւոր տեղերը,
անցնալի մնացորդները, ներկան և անցնալ
կենսը ու վրաց ժողովրդի սովորութիւնները:
Ամսագիրը մէջը տպւում են պօէմներ, վրաս-
տանի բերքեր, եկեղեցիների, աւերակների
նկարագրութիւններ պատկերների հետ միա-
սին և այլն:

«Մօզգաւորի»-ի առաջին երկու համարները լաւ
տպաւորութիւն են թողնում ընթերցողի վրա:
Յօդուածների մէջ նշանաւոր է Ն. Ռեբնիլի
«Մոլով անդկացներ» (վրաց մենամարտութիւն)
գրուածքը, որի մէջ հեղինակը պատմում է թէ
ինչպէս էր կատարվում այդ մենամարտութիւ-
նը և մի տեղ յիշում է, որ եթէ ազնուականը
հասարակ կոչման տէր մարդուն սրով մենա-
մարտութեան էր հրաւիրում, միայն փայտով
էր առնալ մուգարա (մենամարտութեան
ժամանակ հաղթողը զգեստ) հաղթելու պիտի
կուէր, հակառակ դէպքում հասարակ մարդուն
սրով մենամարտութեան կանչելը մեծ անպատ-
ւութիւն էր ազնուականի համար: Ահա թէ
որտեղից է ծագել այն, որ ազնուականին փայ-

տով ծեծելը և ապառի տալը մեծ անպատու-
թիւն է և ազնուականը այդ բանը դժուարու-
թեամբ կը մարսէ, իր պատիւը վերականգնե-
լու համար կը զոհէ մինչև անգամ իր
կեանքը:

Հիմնալի գրուածք է «Փառնաւազ» պօէման,
որի նիւթը վրաց Փառնաւազ թագաւորի կեան-
քից է վերցրած: Փառնաւազ, 325 թ. Ռ. Բ. ա.,
իր հօր մահից յետոյ, պատմաբանից վրացի-
ներին Մյակէթ արչաւած Ալեքսանդր Մակեդո-
նացու դէմ, յաղթեց նրան, արտաքսեց Վրաս-
տանից և դարձաւ ինքնակալ-թագաւոր: Հե-
տաքրքրական լէգենդաւ և «Ինչպէս է ստեղծ-
վել դիւնի» «Մօզգաւորի» մէջ տպւում է
և «Սամարթի» Սաքարթվելա» (հարաւային
Վրաստան) պ. 2. ձիւնհաճէ յօդուածը, որ-
տեղ նա պատմում է, թէ ինչպէս հարաւային
Վրաստանում (Սոմաթիլիում) երկար դարերի
ընթացքում շատ վրացիներ էին հաւաքված և
երբ հաւաքով բաժանվեցին հայ-գրիգորեան-
ներից և միացան յունական եկեղեցու հետ,
վրացիներից շատերը, որոնք Հայաստանի սա-
մաններին մօտ էին ապրում, չը ցանկացան
հեռանալ հայ եկեղեցուց, իւրացրին հայկական
լեզուն և սովորութիւնները, իսկ հայերը, այդ
բանից օգուտ քաղելով, հետզհետէ ներս եկան
Վրաստան և վրացիներից ամեն ինչ խլեցին—
վանքեր, քաղաքներ, գիւղեր, բերքեր, ի միջի
այլոց և Հաղպատն ու Սանահինը, որոնք վրա-
ցիներին էին պատկանում ի հարկէ, այս բո-
լորը պ. ձիւնհաճէն բերում է առանց փա-
տերի, հիմնված միայն լէգենդաների վրա,
որոնք ժողովրդի մէջ, բերանից բերան անցնե-
լով, հասել են մեզ, իսկ պ. ձիւնհաճէն արա-
նջի մի փունջ կազմելով տալիս է մեզ իբրեւ
մի իրողութիւն: Նա ուղղակի ակնարկում է, թէ
հայոց պատմութիւնը ստում է, բայց չէ յոյց
տալիս, թէ վրաց պատմութեան մէջ որտեղ է
գրված, որ Հաղպատն ու Սանահինը վրացի-
ներին էին պատկանում: Յօդուածից երևում
է, որ հայերը վրացիներից մօտ 200-ի չափ ե-
կեղեցի և բերք են խլել: Յօդուածը, ինչպէս
երևում է, դեռ չարունակվելու է, երբ կը
վերջանայ առանձին յօդուածով աւելի մանրա-
մասն կը ծանօթացնեն «Մշակի» ընթերցողնե-
րին:

Հետաքրքրական յօդուածներ են նոյնպէս
«Արմազի, Բէթիւ-Յիւլի» բերքերի և «Շը-
թայի վանքի» ու «Կուսուրգո վանքի» նկա-
րագրութիւնները պատկերներով և բազմա-
թիւ արձանագրութիւններով հանդէս: «Մօզ-
գաւորին» յօդուածների մէջ ամենից աւելի
է ընկնում «Վրաց-պատմութիւն ժողովրդի հա-
մար» գրուածքը, որը դիւրեմբունիլ լեզուով
և մանրամասն կազմված է մասնաւորապէս
ժողովրդի համար, տպւած է մեծ տառերով,
որպէս զի աւելի մատչելի դառնայ ժողովրդին:
Ամսագրի դիւրը միջակ է, ամեն մի համար
կազմված է 104 երեսից, տպւած է լաւ թղթի
վրա, պատկերները մաքուր են և տարեկան
բաժանորդագիրն է հինգ ռուբլի:

Դ. Տէր-Գաւթեան

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Մարտի 3-ին

Կարսը կարծես իր բազմամեայ ջնից արթ-
նանալու նշաններ է ցոյց տալիս: Լրագիրներից
«Բարք» արդէն լսած կը լինէր, որ պ. հա-
նապապեան կարգադրութեան և բուն ցան-
կութեան համար մօտիկ աղագոյում իրագործ-
վելու վրա է և մնացել է միայն այն հարցը,
թէ որչափ տաք կերպով կը կաշի այդ բանին
տեղիս հասարակութիւնը, մանաւանդ հարուստ
դասակարգը, որի նիւթական ավակցութիւնից
շատ եւ շատ բան է կախված: Յոյս ունենը,
որ այն ժամանակ խօսակցութիւնները, որոնց
ժամանակ ամեն մէկը պատրաստակաւնութիւն
է յայտնում դրամական աշակցութիւն ցոյց տալ
այդ հանրօգուտ գործին, լոկ խօսքեր չեն մը-
նայ և գործ կը դառնան: Նրանցից իւրաքան-

չիւրը, հէնց իր անձնական շահերն աչքի առաջ
ունենալով, պէտք է ջնքմ կերպով աշխատէ,
որ պրօգրիմալիս բացումն օր առաջ իրա-
գործվի, որովհետեւ իրանց զաւակներին Թիֆ-
լիս ուղարկելը և ուսում տալը հարկւրներ է
նստում, եթէ չը հաշուենք այն վնասները, ո-
րոնց ենթարկվում են մեր պատանիները օ-
տարութեան մէջ, հեռու իրանց ծնողների և
բարեկամների աշխուրջ հակողութիւնից: Այն
գումարը, որ մեր մի քանի հարուստներն ու
միջակ կարողութեան տէր մարդիկ, շատ ան-
գամ իրանց բերանից ու անհրաժեշտ ծախսե-
րից կտրելով՝ տալիս են իրանց զաւակներին
օտարութեան մէջ կրթվելու համար, շատ եւ
շատ բաւական կը լինի պահելու Կարսի մէջ
մի հատ պրօգրիմալիս: Բացվելիք դպրոցի
ծախսը լիովին կը ծածկեն քաղաքից արվելիք
օժանդակութիւնը ամեն տարի և աշակերտ-
ներից ստանալիք թոշակներն ու մասնաւոր
մուտքերը: Գնում է միայն տաք կերպով գոր-
ծին կաշի ու աշակցութիւն ցոյց տալ պ. հա-
նապապեանի և գործն արդէն դուրս եկած
կը լինի:

Նոյնպիսի աջող ելք ստանալու վրա է նաեւ
քաղաքային ինքնավարութեան գործը, որը
քաղաքիս առաջնակարգ և հերթական հար-
ցերից մէկն է: Պ. հանապապեանի ցանկու-
թեան համեմատ ամեն միջոց գործ է դրվում
գոնէ այս 1901 թ.ին ձեռք բերելու քաղա-
քային ինքնավարութիւնը: Կարսի համար ա-
մօթ է քաղաքային ինքնավարութիւն չունե-
նալը, երբ այդ բանն ունեն իրանից թէ դի-
քով և միջոցների շտապ ու շատ պակաս քա-
ղաքներ: Այս հարցն առանց հատուցացած է
երևում, որ շատերը մինչև անգամ քաղա-
քային ինքնավարութիւնը հարցերով են դադ-
ւում և որչ չըլանի ընտրելին է «Մշակի»
մշտական աշխատակից պ. Տիգրան Յովհան-
նիսեան, որը իբրեւ երիտասարդ և առաջա-
դիմական ու իրաւագէտ մարդ շատ յարմար
կը լինի այդ պաշտօնի համար, որից աւելի
յարմարաւորը գոնէ Կարսում չը կայ մէկ ու-
րիշը:

Քաղաքը մեծ ուշադրութիւն է դարձնում
առողջապահական պայմանների վրա, օրինակ
մաքրութեան, ծախ, հացի և այլ կենսական
պիտոյքների: Մեզ համար աւելի ծանրակշիւ
հարցն է քաղաքի մաքուր ջուր մատակարա-
րելու խնդիրը, որից դուրս է մեր քաղաքը և
որը հակառողջապահական շատ նեղ գրութեան
մէջ է գնում մեր ժողովրդին: Այս հարցը եւս
դրական կերպով վճռելու համար աշխա-
տում է թէ պ. հանապապեան և թէ պ. ոս-
տիկանապետը և յոյս ունենը կարող կը լը-
նեն իրագործելու: Ի հարկէ ժողովրդի գիտակ-
ցական աշակցութիւնը այս գործում էլ կարող
է մեծ դեր խաղալ և անհրաժեշտ էլ է:

Գովելի է թատերասերների վերաբերմունքը
դէպի վաղուց մտադրված թատրոնական բեմը.
երկու ներկայացումներ տալուց յետոյ մտա-
գրութիւն ունեն մշտական խումբ կազմել և
չարունակ ներկայացումներ տալ: Չատիկից յե-
տոյ առաջին ներկայացումն ուղղում են տալ
Ախալքալաքի վնասված գիւղացիների օգ-
տին և յոյս կայ, որ հասարակութիւնը
քնից կը զարթնէ, կը զարթնեն և իր
թմրած ջղերը, որոնք շատ վաղուց է հա-
սարակական աշխատանքն օգնութեան հանե-
լու համար բթացած և անպէտք են դարձել:

Հ. Նոյրատեան

ՆԱՄԱԿ ՂԱՐԱՍՈՒՄԱՐՈՒՆ

Փետրվարի 27-ին

Տեղիս հայոց եկեղեցու երէցփոխ պ. Մ.
Թումանյանը, իննամեայ պաշտօնավարութիւ-
նից յետոյ հրաժարվելով իր պաշտօնից, ան-
ցնալ տալով դեկտեմբեր ամսին կոյսացի էր
ծխականների ժողով՝ նոր երէցփոխ ընտրելու
համար: Բայց չը նայելով, որ տեղիս Սարգեան
քահանան առանձին հրաւիրագրերով յայտնել
էր ծխականներին ընտրութեան մասին, սա-

Одѣлія": Одесса, Канатная, № 13. 1—3